

Տեղեկատվություն
«Վարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ

| Թիվ | Համագործակցություն | Տարեթիվ | Ընթացիկ վիճակ |
|-----|---|------------|--|
| 1 | Մասնակցություն ԱՄՆ դեսպանատանը կազմակերպված տոնական ընդունելությանը՝ ԱՄՆ անկախության օրվա կապակցությամբ | 01.07.2016 | Մարզի ղեկավարությունը մասնակցել է ԱՄՆ դեսպանատանը կազմակերպված տոնական ընդունելությանը՝ նվիրված ԱՄՆ անկախության օրվան: |
| 2 | Մասնակցություն Արգենտինայի դեսպանատանը կազմակերպված տոնական ընդունելությանը՝ Արգենտինայի անկախության օրվա կապակցությամբ | 08.07.2016 | Մարզի ղեկավարությունը մասնակցել է Արգենտինայի դեսպանատանը կազմակերպված տոնական ընդունելությանը՝ նվիրված Արգենտինայի անկախության օրվան: |
| 3 | Քաղաքացիների սպասարկման գրասենյակի բացում՝ մարզկենտրոնում | 18.07.2016 | Աշտարակի համայնքապետարանում տեղի ունեցավ Աշտարակի Քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՍԳ) պաշտոնական բացման արարողությունը: Գրասենյակը հիմնադրվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում՝ Շվեյցարիայի զարգացման և |

| | | | |
|---|---|-------------|--|
| | | | <p>համագործակցության գործակալության (ՇՁՀԳ) և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) համաֆինանսավորմամբ եւ իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿՁՆ) հետ համատեղ: Բացման արարողությանը մասնակցել է մարզպետ Գաբրիել Գյոզալյանը:</p> |
| 4 | <p>Մասնակցություն Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության ՀԲԸՄ-ի և «Առաքելություն Արևելք» մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ կազմակերպված Together4Armenia վեբհարթակի մեկնարկին նվիրված միջազգային:</p> | 28.07.2016 | <p>Մարզի ղեկավարությունը մասնակցել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության ՀԲԸՄ-ի և «Առաքելություն Արևելք» մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ կազմակերպված Together4Armenia վեբհարթակի մեկնարկին նվիրված միջազգային: Ծրագիրն ուղղված է սփյուռքի ներուժի փոխանցմանն՝ ինպաստ տեղական համայնքներում երեխաներին առնչվող ոլորտների զարգացմանը:</p> |
| 5 | <p>Ավստրիայի զարգացման գործակալության և GIZ-ի կողմից</p> | 2014-2016թթ | <p>Ավստրիայի զարգացման գործակալության և GIZ-ի կողմից Արագածոտնի մարզպետարանի և ՀՀ կառավարության հետ</p> |

| | | | |
|---|---|--------------|--|
| | Արագածոտնի մարզպետարանի և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ «2014-2016թթ. համար Համայնքային ինտեգրված էրոզիայի ռիսկի կառավարման ծրագրի» իրականացում: | | համագործակցությամբ Ապարանի տարածաշրջանի Լուսազյուղ, Արայի համայնքների վարչական տարածքում իրականացվում է «2014-2016թթ. համար Համայնքային ինտեգրված էրոզիայի ռիսկի կառավարման ծրագիրը»: |
| 6 | Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նիստի արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության զարգացման վերաբերյալ: | 25.08.2016թ. | Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նիստի արդյունքների հիման վրա առաջարկություններ են ներկայացվել Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության զարգացման ուղղությամբ, որոնք վերաբերում են գյուղատնտեսության, արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, առողջապահության կրթության, մշակույթի, տուրիզմի և զբոսաշրջության ոլորտներին: |
| 7 | Կլիմայի և նորարարական տեխնոլոգիաների ոլորտներում ֆրանսիական դեպարտամենտների հետ հնարավոր համագործակցության զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: | 20.08.2016 | Առաջարկություններ են ներկայացվել կլիմայի և նորարարական տեխնոլոգիաների ոլորտներում ֆրանսիական դեպարտամենտների հետ հնարավոր համագործակցության զարգացման ուղղությամբ, որոնք վերաբերում են տեղեկատվական տեխնոլոգիաների համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, գիտատար սարքավորումների արտադրության կազմակերպմանը, արևային ջերմային էներգետիկայի զարգացմանը: |

| | | | |
|----|--|------------------|--|
| 8 | ԻՖԱԴ բարեգործական կազմակերպության կողմից խմելու ջրագծի կառուցում Լուսազյուղ, Շենավան, Վարդենուտ, Ագարակավան, Բազմաղբյուր, Աղծք, համայնքներում: | 2016թ. ընթացքում | ԻՖԱԴ բարեգործական կազմակերպության կողմից Լուսազյուղ, Շենավան, Վարդենուտ, Ագարակավան, Բազմաղբյուր, Աղծք, համայնքներում իրականացվում է խմելու ջրագծի կառուցման ծրագիր: |
| 9 | ԻՖԱԴ բարեգործական կազմակերպության կողմից 50 մ.խմելու ջրագծի, 2 հատ ՕԿԶ-ի և քլորակայանի կառուցում Արագած համայնքում: | 2016թ. ընթացքում | ԻՖԱԴ բարեգործական կազմակերպության կողմից Արագած համայնքում իրականացվում է 50 մ.խմելու ջրագծի, 2 հատ ՕԿԶ-ի և քլորակայանի կառուցման ծրագիր: |
| 10 | Ամերիկյան բարեգործական կազմակերպության կողմից / „Վերջին օրերի սրբեր„/ խմելու ջրագծի կառուցում Ալագյազ, Բերքառատ, Ճարճակիս, Հարթավան, Սարալանջ, Արայի, Դավթաշեն, Թաթուլ, Արուճ համայնքներում: | 2016թ. ընթացքում | Ամերիկյան բարեգործական կազմակերպության կողմից / „Վերջին օրերի սրբեր„/ Ալագյազ, Բերքառատ, Ճարճակիս, Հարթավան, Սարալանջ, Արայի, Դավթաշեն, Թաթուլ, Արուճ համայնքներում իրականացվում է խմելու ջրագծի կառուցման ծրագիր: |